Արձանագրություն N 4

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կարիքների համար՝ «ՀՀ Տավուշի մարզի Զորական համայնքի խմելու ջրագծիպոմպակայանի կառուցում», «ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի թիվ 4 դպրոցի մարզադահլիճի վերանորոգում», «ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Օխտար բնակավայրի դպրոցի տանիքի վերանորոգում» աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստի**

ք. Երևան

**«11» «մարտի» 2019թ.**

**Ժամը՝ 10:00**

*Հանձնաժողովի նախագահ*

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | Սամվել Առաքելյան |

*անդամներ՝*

| | |
|---|---|
| 1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Էդուարդ Ջանջուղազյան |
| 2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Գևորգ Խրիմյան |
| 3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Արթուր Սողոմոնյան |
| 4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Արեգ Եղիյան |
| 5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Լիլիթ Սեդրակյան |

1. **ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26 ծածկագրով ընթացակարգի վերագնահատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.**

---

(Ս. Առաքելյան)

1.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26 ծածկագրով ընթացակարգի վերագնահատման նիստը անցկացվել է 2019 թվականի մարտի 11-ին, ժամը 10:00-ին, ՀՏԶՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. **Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ փոփոխված տեղեկություններ**

---

(Ս. Առաքելյան)

2.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26 ծածկագրով ընթացակարգի բացման նիստում «Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ հայտը հաստատված է եղել ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հետևանքով «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ Չափաբաժին 2-րդի մասով՝ «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ն, Չափաբաժին 3-րդի մասով՝ «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ-ն:

2.2 Ս.թ. մարտի 11-ին «Էկենգ» ՓԲԸ-ի կողմից ստացվել է ի լրումն գրություն, որ «Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ-ի կողմից նույնականացման քարտի փոփոխման արդյունքում առաջացել էր ստորագրության վավերականության խնդիր, ինչը ճշգրտվել է, հետևապես՝ ստացված փաստաթղթերը անհրաժեշտ է դիտել որպես պատշաճ ստորագրված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝

---

(Ս. Առաքելյան)

3.1 «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ Չափաբաժին 2-րդի և 3-րդի մասով՝ **«Էներգո Սմյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ**-ին:

3.2 **Կազմակերպությանը** ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով դրանք Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ l.sedrakyan@atdf.am ՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26» ծածկագրով մրցույթի մասնակցի մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ս. Առաքելյան)

4.1 «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/24/25/26» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալուն ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 12:00-ին, ՀՏԶՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

*Հանձնաժողովի նախագահ*

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Սամվել Առաքելյան

*անդամներ՝*

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Գևորգ Խրիմյան

2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էդուարդ Ջանջուղազյան

3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Սողոմոնյան

4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արեգ Եղիյան

5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀ) — Լիլիթ Սեդրակյան